ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՍԱՊԱԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

(27 ՀՈՒԼԻՍ, 1999 Թ.)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղում ենք ձեզ հատուկ օրհնություն ու մաղթում ուժ և կարողություն, աստվածային հավատքի զորություն, որպեսզի Նա իբրև ռահվիրաներ ճանապարհ հաղթահարի մեր ուխտագնացների համար, որպեսզի այս օրերում իրենց ուխտը կարողանան ի կատար ածել Լեռնային Ղարաբաղից, Արցախից մինչև Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Ս. Աստվածածնի տոնի առիթով: Ձեզ այստեղ՝ Մայր Տաճարում կսպասենք սիրով, Ս. Աստվածածնի խնդրանքներով և աղոթքներով, որպեսզի ձեր ճանապարհը ծանր չթվա ձեզ, այլ կարողանաք այս տասը օրերու ընթացքում կատարել ձեր պարտականությունը իբրև առաջին քայլողներ Արցախից մինչև Ս. Էջմիածին և այդ ճանապարհի անցումը բարեհաջող կատարեք: Բյուր օրհնություն ձեզ, ուժ և կարողություն:

Քիչ առաջ Արբազան Հայրը հիշեց մի բանաստեղծություն, որ Հովհաննես Թումանյանի կողմից գրված է և մեր մանկության տարիներում «Թանգարան» գրքին մեջ արձանագրված է հետևյալ ձևով. «Ա՜յ ուխտավոր, հա՜յ ուխտավոր, որ ուխտի կերթաս դեպ Արարատ»:

Արարատը մի բարձունք է, ուր Նոյյան տապանը հանգչեց, ուր Նոյը իջավ և իր առաջին զոհը մատուցեց, Ս. Էջմիածինը մի բարձունք է, ուր Ս. Գրիգոր Լուսավորիչը աստվածային տեսիլքով Միածինը իբրև այս երկու բարձունքների ուխտավոր իջած տեսավ: Բարի ճանապարհ և ուժ, համբերություն, կարողություն: Աստված մեր ժողովուրդը 1700-ամյակի առիթով պիտի օրհնի, բայց մանավանդ պիտի օրհնվեն նրանք, ովքեր դարձ են ապրում, զոհողություն ի սեր Քրիստոսի և ի սեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո: Ձեր ճանապարհը բաց է, ինչպես Հիսուս իր աշակերտները ուղարկած ժամանակ ասաց. «Ուր որ ձեզ ընդունում են, այնտեղ մտեք, մեր օրհնությունը տարեք, մեր սերն ու հարգանքը տարեք, ուր որ ձեզ չեն ընդունում, ձեր կոշիկների փոշին թոթվեցեք և հեռացեք»: Բայց վստահ եղեք, որ մեր ժողովուրդը և ամեն տուն ձեզ գրկաբաց պիտի ընդունի: Բարի ճանապարհ և բարի վերադարձ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

«Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ և Տէր մեր Յիսուս Քրիստոս եղիցի ընդ ձեզ ճանապարհորդակից և զօրավիգ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»: